Եգիպտոսի կուսակալ մը, 'ի պատիւ Դիոկղետիանոս կայսեր. և որովհետև անունն որոշ չի կարդացուիր, այլ կը տեսնուին միայն լատին PO տառերը, անոր համար Պոմպէոսի կարծուած է։ Այս սեան ստորոտը գետինը շատ անգամ պեղած են գանձ գտնելու յուսով, և թերևս այս պեղմանց պատճառաւ՝ խօթը բթաչափ դէպ 'ի հարաւային արևմտակողմը ծռած է։

Այս սեան հարաւային արևմտակողմը խոտորելով բլրակի վրայ պեղեալ մէկ քանի գետնադամբանք ընդառաջ կ'ելլան, որոնց պատերը լի են գերեզմանական խորշերով։ Ասոնք 'ի հնումն Նախկին Աղեքսանդրիոյ գերեզմանատան մէկ մասը կը կազմէին, որոնց մէջ ամենէն ընդարձակը 3480 մեդր երկայնութիւն ունի։ Ասոնց ներքսակողմն 'ի բազում սենեակս և 'ի բաժանմունս որոշեալ է, և այնպիսի գեղեցիկ ճարտարապետութեամբ շինուած, որ յայտնապէս կը վկայեն յունական ծագումն ունենալնին։ Բայց ասոնք ոչ թէ սոսկական անձի, այլ թագաւորաց միայն սահմանեալ էին։

Սակայն այս ամեն հնութեան յիշատակարանք նշաւակ եղած են օդոյ վնասակարութեանց, որոնք երկար ժամանակ անձրևի ու արեգական տակ մնալով, և կրելով շարունակ երկուքին դէմ ընդդէմ ազդեցութիւնները, կորուսած են իրենց առաջին արուեստական ճարտարութիւնն ու նրբութիւնը։ Առ այս ոչինչ նուազ ազդեցութիւն ունեցած է դարձեալ Աղեքսանդրիոյ՝ նոյն իսկ և Եգիպտոսի բազմաժամանակեայ խեղճութեան վիճակը, և բարբարոսաց ձեռք մատնեալ ըլլալը. բայց այժմեան տէրութիւնն որ յամենայնի կը ջանայ քաղաքակրթել զԵգիպտոս, անշուշտ պիտի չմոռանայ և հնութեան այս անգին յիշատակարանքը։

# ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ՕՐԷՆՔ

*14/26 սեպտեմբեր 1869 — 20 ճէմազիւլ ախըր 1286*

**ԿՇՌՈՑ ԵՒ ՉԱՓՈՑ ՎՐԱՅ**

## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՐԱՏԷ

### ՈՐ ԿԱՏԱՐՈՒԻ ԸՍՏ ԱՅՍՄ ՊԱՏՃԵՆԻ

Յօդուած Ա. — Կշռոց և չափուց դրութիւնն Օսմանեան կայսրութեան մէջ այսուհետև ունենայ իբր խարիսխ Մեդրը կամ Զիրա՛ի-ա՛շարի, որուն երկայնութիւնը կը ներկայացնէ երկրաւոր միջօրէականին քառորդին տասը միլիոներորդ մասը։

Կշռոց և չափուց շարքը ձևանան տասնորդական ստորաբաժանմամբ կամ բազմապատկութեամբ գլխաւոր միութեանց։

Յօդ. Բ. — Մէկ Զիրա՛ի-ա՛շարի կամ Մեդրը բլատինէ իբր նախատիպ օրինակ պահուի կայսերական Պալատան գանձուն մէջ։

Յօդ. Գ. — Զիրա՛ի-ա՛շարի կամ Մեդրը առնուեր է իբր միութիւն երկայնութեան։

Անոր ստորաբաժանմունքն են.

1/10. — 1 Էօշրի-զիրա՛ կամ Տասնորդամեդր։

1/100. — 1 Ա՛շարի-զիրա՛ կամ Հարիւրորդամեդր։

1/1000. — 1 Մի՛շարի-զիրա՛ կամ Հազարորդամեդր։

Անոր բազմապատիկներն են.

1,000. — Միլի-ա՛շարի կամ Հազարամեդր։

10,000. — Ֆէրսախ-ա՛շարի կամ Բիւրամեդր։

Յօդ. Դ. — Մակերևութի միութիւնը

digitised by A.R.A.R.@

դաշտաց համար՝ է քառակուսայ մը երկրը, որուն կողն ըլլայ տասը Չիրա կամ մեդր։ Այս միութիւնը որ կը բովանդակէ 100 քառակուսի Չիրա կամ մեդր, կ'ըսուի Միքյասը ի-ա՛շարի կամ Կալ. 10,000 քառակուսի Չիրա կամ մեդր կը կազմեն մէկ Ճէրիպ կամ Հարիւրակալ։

Յօդ. Ե։ — Միութիւնն ընդունակութեան չափու հեղանիւթոց, արմըտեաց և չոր գոյացութեանց՝ է ընդունակութիւնն խորանարդի մը որուն կողն ըլլայ մէկ Էօշրի գիրա կամ տասնորդամեդր. այս միութիւնը կ'ըսուի Էօշէք կամ լիդր, որուն ստորաբաժանմունքն է.

1/10։ — 1 Ջարֆ կամ Տասնորդալիդր։

Բազմապատիկն է.

100։ — 1 Քիլէ Ի-ա՛շարի կամ Հարիւրալիդր։

Յօդ. Զ։ — Կշռոց միութիւնն է Տիրհէմ-ա՛շարի կամ կրամ, որ հաւասար է ծանրութեան՝ պատարկութեան մէջ մէկ խորանարդ Ա՛շարի-գիրա կամ հարիւրորդամեդր զուտ ջրոյն, հարիւրորդատիճան բարեխառնութեամբ իբր 4°.4, որ կը համապատասխանէ ջրոյն ծայրագոյն խտութեանը։

Անոր ստորաբաժանմունքն են.

1/10։ — 1 Էօշրի-Տիրհէմ կամ Տասնորդակրամ։

1/100։ — 1 Ա՛շարի-Տիրհէմ կամ Հարիւրորդակրամ։

1/1000։ — 1 Մի՛շարի-Տիրհէմ կամ Հազարորդակրամ։

Անոր բազմապատիկներն են.

1,000 Տիրհէմ։ — 1 Վէքիէ-ա՛շարի կամ Հազարակրամ։

100 Վէքիէ։ — 1 Գանթար-ա՛շարի կամ մեդրական կենդինար։

1,000 Վէքիէ։ — 1 Թօնիլաթա կամ մեդրական տակառաչափ։

Յօդ. Է։ — Մէկ Վէքիէ-ա՛շարի կամ Հազարակրամ ըլլադինէ իբր նախատիպ գաղափար պահուի կայսերական Պալատան գանձուն մէջ։

Յօդ. Ը։ — Նոր չափերը կազմուին ըստ գաղափարին որ յիշեցինք Բ և Է յօդուածոց մէջ. դարձեալ կշիռները և չափերը, ինչպէս նաև չափելու գործիները, որ վաճառականութեան մէջ կը գործածուին, կնքով նշանուին, որ ապահովէ անոնց ճշդութիւնը։ Վերջապէս կշիռներն ու չափերը պէտք է միշտ նշանակուած ունենան վրանին իրենց զօրութիւնը։

Յօդ. Թ։ — Սկսեալ 1 մարտ 1287 (1/13 մարտ 1871) կայսերական ամեն գործակատարութիւնք բացարձակապէս գործածեն կշռոց ու չափուց նոր դրութիւնը՝ իրենց գնելու կամ վաճառելու ամեն գործառնութեանց մէջ և իրենց ամեն գործոցը մէջ։

Յօդ. Ժ։ — Այժմեան կշռոց ու չափուց գործածութիւնը հասարակաց համար զօրութիւն ունենայ մինչև 'ի 1 մարտ 1290 (1/13 մարտ 1874). սակայն ամեն դաշինք որ կը գրուին մասնաւորաց մէջ, սկսեալ 1 մարտ 1871 մինչև 'ի 1 մարտ 1874, թէ որ հին չափերն յիշուին, պէտք է միանգամայն նշանակել անոնց համապատասխանը նոր չափերով. վերջապէս արգիլեալ է գործածել հին չափերը այն ամեն գործոց մէջ որ յետոյ են 1/13 մարտ 1871, եթէ այն գործոց արդասիքը պիտի ձգուի անդր քան 1/13 մարտ 1874։

Յօդ. ԺԱ։ — Սկսեալ 1/13 մարտ 1874 նոր չափուց գործածութիւնն ըլլայ պարտաւորիչ ամենուն. այժմեան չափքն երկայնութեան, ընդունակութեան և կշռոց՝ բոլորովին արգիլուին։

Յօդ. ԺԲ։ — Հիմակուընէ հաշուին և հրատարակուին աղիւսակներ վերածութեան հին չափուց նոր չափերու։

Յօդ. ԺԳ։ — Նոր չափուց աղիւսակն և տասնորդական հաշուի գործադրութիւնքն այս չափերուն վրայ՝ սովրեցուին բոլոր Դպրոցաց մէջ։

Յօդ. ԺԴ։ — Առաջիկայ օրինաց տրամադրութիւնքը պարտաւորիչ չեն ոչ Տիրհէմի-Շէր'իին, որ կը գործածուի ծխախոտի բաժառութեան դաշանց մէջ օրինօք Շէր'ի, ոչ դրամոց և ոչ այն չափուց մէջ որ կը գործածուին ակնեղինաց համար։

Յօդ. ԺԵ։ — Խնամք տարուին մասնաւոր կանոնագրութեամբք կշռոց և չափուց դրութեանը գործադրութեան մէջ որ հաստատուած է առաջիկայ օրէնքով, ինչպէս նաև ստուգելու և քննելու այս կշիռներն ու չափերը։

digitised by A.R.A.R.@

# ՑՈՒՑԱԿ ՄԵՏՐԱԿԱՆ ՉԱՓՈՒՑ

| ՀՐԱՄԱՅԵԱԼ ԱՆՈՒԱՆՔ | | ԶՕՐՈՒԹԻՒՆ | |
|---|---|---|---|
| *Թոյլ կամ Երկայնութիւն* | | | |
| ԶԻՐԱ' Ի-Ա'ՇԱՐԻ | *Մետր։* | *Մետրը կը բացատրէ մերձաւորապէս* $^1/_{10000000}$ | |
| ՄԻԼԻ'-Ա'ՇԱՐԻ | *Քիլոմետր։* | 1,000 *Մետր։* | *մասը երկրաւոր միջօրէականին քառորդին, կամ հեռաւորութեան բեւեռին հասարակածէն. այսինքն երկրիս շրջապատն՝ անցնելով բեւեռներէն և հետևելով միջօրէականին, մերձաւորապէս է 40 միլիոն մետր։* |
| ՖԷՐՍԱԽ-Ա'ՇԱՐԻ | *Բիւրամետր։* | 10,000 *Մետր։* | |
| ԽՕՇՐԻ-ԶԻՐԱ' | *Տասնորդամետր։* | $^1/_{10}$ *Մետր։* | |
| Ա'ՇԱՐԻ-ԶԻՐԱ' | *Հարիւրորդամետր։* | $^1/_{100}$ *Մետր։* | |
| ՄԻ'ՇԱՐԻ-ԶԻՐԱ' | *Հազարորդամետր։* | $^1/_{1000}$ *Մետր։* | |
| *Սար կամ Մակերևոյթ* | | | |
| ՄԻՒՐԷՊՊԱ'Ի-Ա'ՇԱՐԻ | *Կալ կամ Ար։* | 100 *Քառ. Մետր կամ մակերևոյթ քառակուսւոյ մը՝ որուն կողն ըլլայ* 10 *Մետր։* | |
| ՃԷՐԻՊ | *Հարիւրակալ կամ Էկտառ։* | 10,000 *Քառ. Մետր կամ մակերևոյթ քառակուսւոյ մը՝ որուն կողն ըլլայ* 100 *Մետր։* | |
| *Հաճմ կամ Տարածոց* | | | |
| ԽՕԼՋԷՔ | *Լիտր։* | 1 *Խոր. Տասնորդամետր, այսինքն խորանարդ մը՝* | |
| ՕՆԼՈՒՔ | *Տասնալիտր։* | 10 *Լիտր։* | *որուն կողն ըլլայ 1 տասնորդամետր։* |
| ՔԻԼԷ'Ի-Ա'ՇԱՐԻ | *Հարիւրալիտր։* | 100 *Լիտր։* | |
| ԶԱՐՖ | *Տասնորդալիտր։* | $^1/_{10}$ *Լիտր։* | |
| *Վէզն կամ Կշիռ* | | | |
| ՏԻՐՀԷՄ-Ա'ՇԱՐԻ | *Կրամ։* | *Կրամն է ծանրութիւն՝ դատարկութեան մէջ 1* | |
| ՎԷՔԻԷԻ-Ա'ՇԱՐԻ | *Քիլօկրամ։* | 1000 *Կրամ։* | *խոր. տասնորդամետր թորած ջրոյ, հարիւրորդ աստիճան բարեխառնութեամբ երբ 4°.4, որ կը համապատասխանէ ջրոյն ծայրագոյն խտութեանը։* |
| ԳԱՆԹԱՐ-Ա'ՇԱՐԻ | *Մետրական Կենդինար։* | 100 *Քիլօկրամ։* | |
| ԹՈՆԵԼԱԹԱ-Ա'ՇԱՐԻ | *Մետրական Տակառաչափ։* | 1000 *Քիլօկր.* | |
| ԽՕՇՐԻ-ՏԻՐՀԷՄ | *Տասնորդակրամ։* | $^1/_{10}$ *Կրամ։* | |
| Ա'ՇԱՐԻ-ՏԻՐՀԷՄ | *Հարիւրորդակրամ։* | $^1/_{100}$ *Կրամ։* | |
| ՄԻ'ՇԱՐԻ-ՏԻՐՀԷՄ | *Հազարորդակրամ։* | $^1/_{1000}$ *Կրամ։* | |

## ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

### ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՉԱՓՈՒՑ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ԶԻՐԱ'Ի-ՄԻՄԱՐԻ | = | 24 | 288 | 3456 | = 0м·758 |
| (Ճարտարապետաց) | | *Փարմաք* | 12 | 144 | = 0·031 |
| | | | *Հաթթ* | 12 | = 0·002 6 |
| | | | | *Նօգթա* | = 0·000 2 |
| ԱՐՇԻՆ | = | 8 | 16 | | = 0м·680 |
| (Վաճառականաց) | | *Ռուպ* | 2 | | = 0·085 |
| | | | *Կիրահ* | | = 0·042 5 |
| ԷՆՏԱԶԷ | = | 8 | 16 | | = 0м·650 |
| | | *Ռուպ* | 2 | | = 0·081 2 |
| | | | *Կիրահ* | | = 0·040 6 |

digitised by A.R.A.R.@

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՔԱՌԱԿՈՒՍԻ ԶԻՐԱ | = | 576<br>Քառ. փարմագ | 82944<br>Քառ. հաթթ | | = 0 ք.մ .57 45 64 |
| ՔԱՌ. ԱՐՇԻՆ | = | 64<br>Քառ. ռուպ | 256<br>Քառ. կիրահ | | = 0 ք.մ ·46 24 |
| ՔԱՌ. ԷՆՏԱԶԷ | = | 64 | 256 | | = 0 ք.մ ·42 25 |
| ՏԷՕՆԻՄ | = | 1600<br>Քառ. Զիրա | | | = 919 ք.մ ·30 |
| ԽՈՐԱՆԱՐԴ ԶԻՐԱ | = | 13824<br>Խոր. փարմագ | 23 887 872<br>Խոր. հաթթ | | = 0 խ.մ ·435519512 |
| ՔԻԼԷ | | | 8<br>Գուլթու | | = 33 Լիտր<br>= 4·125 |
| ՕՔՔԱ | = | 400<br>Տիրհէմ | 6400<br>16<br>Գրաւթ | | Կրամ<br>= 1282·945<br>= 3·207 36<br>= 0·200 |
| ՉԷՔԻ | = | 4<br>Գանդար | 176<br>44<br>Օքքա | 400<br>100<br>Լոդրա | Քիլոկրամ<br>= 225·798<br>= 56·449 |

## ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

### ՆՈՐ ԵՒ ՀԻՆ ՉԱՓՈՒՑ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մետր<br>(Զետ՜ն [illegible]) | = 10<br>Տասնորդամ. | 100<br>10<br>Հարիւրորդամ. | 1000<br>100<br>10<br>Հազարորդամ. | = | Զիրա<br>1·319 | Ա Փ Հ Ն<br>= 1 – 7 – 7 – 11 |
| Մետր . . . . . . . . . | | | | = | Արշին<br>1·471 | Ա Ռ Կ<br>= 1 – 3 – 1 |
| Մետր . . . . . . . . . | | | | = | Էնտազէ<br>1·539 | Է Ռ Կ<br>= 1 – 4 – 6 |
| Քառ. Մետր | 100<br>Քառ. տասնորդամ. | 10 000<br>100<br>Քառ. հարիւրորդամ. | 1 000 000<br>10 000<br>100<br>Քառ. հազարորդամ. | = | Ք. Զիրա<br>1·7416 | |
| Քառ. Մետր . . . . . . . . | | | | = | Ք. Արշին<br>2·1609 | |
| Քառ. Մետր . . . . . . . . | | | | = | Ք. Էնտազէ<br>2·3685 | |
| ՀԱՐԻՒՐԱԿԱԼ (Ճէրիպ)<br>ԱՐ կամ ԿԱԼ (Մի-[illegible]) Ար. | | 100 | 10 000<br>100<br>Քառ. մետր | = | Տէօնիւմ<br>= 10·977 81<br>= 0·108 78 | Տ Ք. Զ<br>= 10·1404<br>= 0·174·05 |
| Խոր. Մետր | 1000<br>Խ. տասնորդմ. | 1 000 000<br>1 000<br>Խ. հարիւրորդամ. | 1 000 000 000<br>1 000 000<br>1 000<br>Խ. հազարորդամ. | = | Խ. Զիրա<br>2·276 108 | |

digitised by A.R.A.R.@

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՀԱՐԻՒՐԱԼԻՏՐ | 10 | 100 | 1000 | = | Քիլէ 2·703 | Ք. Գանգար 2 — 5,62 |
| | Տասնորդալիտր | 10 | 100 | | | |
| | | 1 | 10 | | | |
| ԼԻՏՐ | | Լիտր (Լիտրէ) | Տասնորդալիտր (Զարֆ) | = | Քիլէ 0·02 703 | Գուլթու 0·22 |
| ՄԵՏՐԱԿԱՆ ՏԱԿԱՌԱՉ. | 10 | 1000 | 1 000 000 | = | Գանդար 17.71492 | Օք. Տիրհէմ = 779 — 183 |
| ԿԵՆԴԻՆԱՐ | Կենդինար | 100 | 100 000 | | | |
| ՔԻԼՈԿՐԱՄ | | Քիլոկրամ | 1000 | = | Օքքա 0·779 | Տիր. դրամ 311 — 12·52 |
| | | | Կրամ | | Դրամ 4·988 5 | |

## ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԻՔ

*Ածումն փռանկաց և ուրիշ եւրոպական ազգաց։* — Համեմատելով փռանկաց սերընդեան աճումն ուրիշ եւրոպական ազգաց հետ, գրեթէ ամենէն վար կամ ամենէն նուազ կը գտնուի. և իրենց ամեն տնտեսագիրք կը բողոքեն այս բանիս վրայ, բարոյականի նուաստութենէն առաջ եկած համարելով։ Ոմանք մասնաւոր քննութեամբք և հաշուով ցուցած են հետևեալ համեմատութիւնները, կենաց տնտեսութեան զանազան վիճակաց վրայ։

Հազար անձի վրայ 'ի Ռուսաստան կ'ըլլան ամուսնութիւնք 10. 'ի Սաքսոնիա 8,5. Բրուսիա 8,1. Տանիմարգա 8, 1. յԱնգղիա 8. յԱւստրիա 7,8. Հոլանտա 7,7. փռանկաստան 7,7. Ալպանիա 7,7. Նորուեկիա 7,7. Շուետիա 7,6. Պելճիա 6,5. Բորդուգալ 6,5. Պաւիերա 6,2։

Հարիւր ամուսնութեանց զաւակք կ'ըլլան 'ի Հոլանտա 488. Նորուեկիա 470. Բրուսիա 460. Պաւիերա 455. Շուետիա 452. Սաքսոնիա 435. Անգղիա 433. Պելճիա 423. Տանիմարգա 418. փռանկաստան իբր 300։

Հարիւր հոգւոյ վրայ կը ծնանին 'ի Ռուսաստան 4,77. Սաքսոնիա 4,05. Բրուսիա 3,98. Աւստրիա 3,68. Սպանիա 3,64. Նորուեկիա 3,30. Տանիմարգա 3,28. Հոլանտա 3,27. Շուետիա 3,25. Պաւիերա 3,24. Անգղիա 3,22. Բորդուգալ 3,10. Պելճիա 3,03. Յունաստան 2,88. փռանկաստան 2,55։

Միլիոն անձի վրայ ծնածներուն թիւն կ'աւելնայ քան զմեռելոց 'ի Նորուեկիա 13,900. Բրուսիա 13,600. Սաքսոնիա 12,700. Ռուսաստան 11,800. Շուետիա 11,500. Անգղիա 11,200. Տանիմարգա 10,400. Աւստրիա 9,300. Սպանիա 8,800. Բորդուգալ 8,500. Հոլանտա 8,000. Պելճիա 7,700. փռանկաստան 2,400։

Յայտնի կ'երևի որ 'ի փռանկաստան եթէ ամուսնութեանց թիւն յետինն չէ' այլ սերնդեան կամ զաւակաց քիչութիւն ամենէն յետինն է. և այս համեմատութեամբ իր այժմեան բնակչաց թուին կրկնապատիկն ունենալու համար՝ 170 տարի պէտք է իրեն, մինչդեռ Բրուսիոյ համար 42 տարի բաւական է, Անգղիոյ՝ 52, Ռուսիոյ 66։

*Թիւ բնակչաց գաղթականութեանց փռանկաց։* — Յետ վերոյգրեալ համառօտ տեղեկութեան կամ յիշատակի մարդաթուի փռանկաց, համարիմք թէ հետաքննելի ըլլայ անոնց իշխանութեան տակ եղած օտար երկիրներու բնակչաց թիւն ալ նկատել. որ էր ըստ վերջին վիճակագրութեան 1868 տարւոյ՝ այսպէս.

| | |
|---|---:|
| Ալճերի (Ճէզայիր) . . . . | 2,913,060 |
| Գոշինշին . . . . . . . | 1,204,000 |
| Հնդկաստան փռանկաց . . | 260,000 |
| Մարդինիկա կղզի . . . . | 151,000 |
| Կուատալուփ . . . . . | 126,000 |
| Միգըլոն և Ս. Պետրոս . . | 5,100 |
| Կիւյան փռանկաց . . . . | 25,150 |
| Ռէօնիոն (Réunion) կղզիք . | 178,000 |
| Սենեկալ . . . . . . . | 206,000 |
| Մատակասգար . . . . . | 22,000 |
| Թայիդի և մերձաւոր կղզիք . | 32,300 |
| Նոր Գալետոնիա . . . . | 5,000 |
| | 5,127,550 |

digitised by A.R.A.R.@